

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ  
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀՀ

Հետազոտության թեման՝

**Աշակերտների առաջադիմության բարձրացումը համագործակցային ուսուցման  
կիրառմամբ**

Հետազոտող ուսուցիչ՝

Նելլի

Անուն

Շահնազարյան

ազգանուն

Արմավիրի «Տիգրան Մեծ» ՌՄՀ վարժարան դպրոց

Մենթոր ուսուցիչ՝

Աիդա

անուն

Սրապիոնյան

ազգանուն

Արմավիր 2023

## Բովանդակություն

Բովանդակություն .....	2
1. Նախաբան .....	3
2. Պատմական ակնարկ.....	3
3. Գործնական համատեքստ .....	7
4. Հետազոտության ընթացք.....	8
5. Տվյալների մշակում և վերլուծություն.....	9
6. Ամփոփում.....	11
7. Գրականություն.....	12

# 1. Նախաբան

Իմ դասավանդման բազմամյա փորձը ցույց է տալիս, որ սովորողների մոտ առաջադիմությունը տարեց-տարի ընկնում է: Երեխաների մոտ կարծես նվազել է դպրոցից գիտելիք ստանալու ցանկությունը, չկա մոտիվացիա, որը կխթանի սովորողին հետաքրքրվել առարկայով: Եվ այս առումով աշակերտների առաջադիմության խնդիրն այսօրվա դրությամբ հանդիսանում է **բարդ և արդիական** խնդիր, որի լուծման ուղիները գտնելու համար էլ ցանկանում եմ կատարել այս հետազոտական աշխատանքը:

Ժամանակակից աշխարհում արդյունավետ համագործակցային ուսումնական գործընթացի կազմակերպումը, սովորողի ինքնուրույն աշխատանքը զարգացնող՝ ակտիվ, փոխներգործային և այլ ժամանակակից ուսուցման մեթոդների, ձևերի, խմբային աշխատանքի օգտագործումը գտնվում է մանկավարժական հանրության ուշադրության կենտրոնում: Համագործակցային ուսուցումը, որպես աշակերտների ներգրավածության բարձրացման միջոց ըստ ուսուցման հեղինակների բարձր արդյունավետություն ունի, ինչով էլ պայմանավորված է իմ կողմից ընտրված հետազոտության թեման :

Համագործակցային խմբային աշխատանքը հանրակրթական դպրոցում հանդիսանում է սովորողի շփման, հաղորդակցման, կարողությունների ձևավորման միջոց, ինչպես նաև կյանքում հաջողությունների հասնելու գործիք: Կարծում եմ, որ դասարանում ճիշտ կազմակերպված խմբային քննարկումն սովորողին կստիպի մտածել, քննարկել ուսումնասիրվող նյութը, հիմնավորել սեփական տեսանկյունը, լսել դիմացինին և համագործակցել, որն էլ այն արդյունքն է, ինչի համար փնտրում եմ ուղիներ:

Սովորողի առաջադիմությունը խթանող գործոններից կարող է դառնալ այն հանգամանքը, որ հենց ուսումնական տարվա սկզբից ուսուցիչը կարողանա մոտիվացնել երեխաներին առարկայի ուսումնասիրման գործում:

Հասկանալի է, որ դասարանում լինելու են տարբեր ընդունակությամբ, տարբեր կարողունակությամբ և տրամաբանությամբ օժտված երեխաներ և իմ նպատակն է բոլոր սովորողների մոտ հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ, ոգևորել և գտնել այն ոսկե միջինը, այն մոտեցումը, որը կաշխատի բոլոր դեպքերում:

Իսկ այն հարցին, թե ի՞նչ է առաջադիմությունը ես կարծում եմ, որ այն ոչ միայն ուսումնական ծրագրով նախատեսված գիտելիքների, հմտությունների և կարողությունների յուրացման մակարդակն է գնահատականի տեսքով, այլ նաև սովորողի արտահայտած վերաբերմունքը ձեռք բերած գիտելիքների նկատմամբ:

Այս աշխատանքում կիրառվում է հետազոտել համագործակցային ուսուցման տեսության զարգացման և գործնական կիրառությունների մասին հարցերում առաջադեմ կրթական համակարգեր ունեցող երկրների (ԱՄՆ, Ֆինլանդիա, Ճապոնիա, Բրիտանիա) գիտամանկավարժական փորձը: Հիմնվելով ժամանակակից մանկավարժական տեսությունների վրա, դասավանդման ընթացքում, կկիրառեմ մեթոդներ և մասնակցությունը խթանող միջոցներ, ստուգելու համար թե որքանով են նրանք նպաստում սովորողների առաջադիմությանը:

# 2. Գաղափարական ակնարկ

Ժամանակակից մանկավարժությունը, բացի առարկայական և մասնագիտական կրթություն ապահովելու խնդրից, ունի նաև մեկ այլ կարևոր խնդիր՝ սովորողներին արդեն դպրոցական նստարանից ընդգրկելու բազմապիսի հասարակական հարաբերությունների մեջ՝ ձևավորելով համագործակցային, խմբում ուրիշների հետ աշխատելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու և այդ որոշումների համար պատասխանատվություն կրելու կարողություններ:

Այսօր կարևորվում է աշակերտակենտրոն ուսուցումը, որի հիմքում ընկած են դասավանդման նորագույն մեթոդները և մեթոդական հնարքները: Դրանք նպատակ ունեն սովորողների մեջ ձևավորելու ուսման նկատմամբ դրական վերաբերմունք և ապահովում են սովորողի ակտիվ մասնակցությունն ուսումնական գործընթացին: Եթե նախկինում ուսուցման ընթացքում շեշտը դրվում էր հիմնականում գիտելիքի յուրացման և պարզ վերարտադրության վրա, ապա այսօր առավել կարևորվում է գիտելիքի յուրացման և կրառման, գործնական հմտությունների ձեռք բերման կարողությունների զարգացումը: Նոր մոտեցումներն առաջնորդվում են մի կարևոր սկզբունքով՝ սովորել՝ կատարելով, սովորել՝ սովորեցնելով: Դա հնարավորություն կտա գիտելիքը դարձնել կիրառական, մեծացնել սովորողների հետաքրքրությունն ուսումնական նյութի նկատմամբ՝ միաժամանակ ապահովել սովորողների ակտիվ մասնակցությունն ուսումնական գործընթացին: Ուսուցիչն իր նպատակին հասնելու համար կարող է կիրառել ցանկացած մեթոդ և հնարք՝ դասը արդյունավետ, մատչելի և հետաքրքրաշարժ դարձնելու միջոցով: Ուսուցիչն ազատ է մեթոդի և հնարքների ընտրության հարցում: Ուսուցման մեթոդները չեն կարող լավը կամ վատը լինել, դրանք միայն

կարող են համապատասխանել կամ չհամապատասխանել այն նպատակներին, որոնց հասնելու համար օգտագործվել են [4, էջ 114]:

Համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Համագործակցային ուսուցման կիրառման պատմությունը գալիս է դեռևս անտիկ ժամանակներից: Հազարավոր տարիներ առաջ Թալմուդը պնդում էր հետևյալը. Թալմուդը հասկանալու համար յուրաքանչյուրը պետք է ունենա ուսուցման գործընկեր: Հին հռոմեացի փիլիսոփա Սենեկան պնդում էր, որ սովորեցնողը սովորում է կրկնակի: Ավելի ուշ, 17-րդ դարում Կոմենսկին հավատում էր, որ սովորողները շահում են երկու դեպքում էլ. երբ սովորում են ուրիշներից, կամ սովորեցնում են ուրիշին: 1700-ականներին Լանքաստերի և Բելլի կողմից Անգլիայում լայնորեն կիրառվում էր սովորողների փոխադարձ ուսուցման գաղափարը: Հետագայում՝ 1800-ական թվականներին ԱՄՆ-ում, հանրային դպրոցների բացմանը զուգընթաց, սկսվեց լայնորեն օգտագործվել համագործակցային ուսուցումը: Ջոն Դյուին լայնորեն տարածում էր սովորողների խմբային աշխատանքի գաղափարը, որպես իր կողմից մշակված «ուսուցման ծրագրային մեթոդի» բաղադրիչ: Մեխանիկական մտապահման և դոգմատիկ կանոնների փոխարեն նա կենտրոնանում է «սովորել կատարելով» գաղափարի վրա: Ըստ Դյուիի ուսուցումը պետք է կենտրոնանա ժողովրդավարական գործընթացների վրա, իսկ դասարանը պետք է արտացոլի ընդհանրական հասարակությունը և դառնա իրական կյանքի լաբորատորիա: Անցած դարասկզբին Ռուսաստանում նույնպես մեծ էր հետաքրքրությունը այդ մոտեցման նկատմամբ և հայտնի մանկավարժ-գիտնական Շացկին հենվելով Ամերիկյան և Եվրոպական երկրների փորձի վրա և ծանոթ լինելով Դյուիի տեսությանն ու դրա գործնական կիրառություններին՝ ուսուցման հիմքում դրեց համագործակցության գաղափարը: 1918 թվականին, ուկրաինացի հայտնի մանկավարժ Ռիվինը խմբային աշխատանքի շնորհիվ հասավ նրան, որ սովորողները տաս ամսում յուրաքանչյուր գիմնազիայի ամբողջ դասընթացը: Ուսուցման խմբային մոտեցումների նկատմամբ հետաքրքրությունը վերածնվեց 1970-80 թվականներից: Դրանք հիմնված էին մինչ այդ կատարված գիտական լայն հետազոտությունների վրա, որոնք հիմք դարձան համագործակցային ուսուցման տեսության ամբողջացման, կիրառման ընթացակարգերի, տեսական ու գործնական հետազոտման մշակումների համար:

Համագործակցային ուսուցման տեսության զարգացման և գործնական կիրառությունների մշակման հարցերում մեծ ներդրում ունեն Սպենսեր Կազանը, Ռոբերտ Սլավինը, Շիլոմո և Յայել Շարանները (Ուսուցում փոքր խմբերով՝ Խմբային հետազոտություն, 1976), Էլիոտ Արոնսոնը (Խճանկար դասարան, 1978), Ելիզաբետ Կոհենը, Դեյվիդ և Ռոջեր Ջոնսոնները (Համագործակցություն և մրցակցություն: Տեսություն և հետազոտություն), Լուիզա Բալոչը (Համագործակցային դասարան, 1998), Պասի Սալբերգը (Փոքր խմբերով ուսուցումը մաթեմատիկայում, 2003) և բազմաթիվ այլ գիտնականներ ու մանկավարժներ [8]:

Համագործակցային ուսուցման տարածման և զարգացման գործում մեծ ներդրում ունի 1979 թվականին հիմնադրված համագործակցային ուսուցման միջազգային ասոցիացիան (IASCE): 1990-ական թվականներից արդեն համագործակցային ուսուցումը հանրաճանաչ դարձավ ուսուցիչների շրջանում: Համագործակցային ուսուցման ներդրման լայն հեռանկարների մասին է խոսում նաև ներկայումս դիտվող մի հետաքրքիր գործընթաց: 1990-ական թվականներից լայն թափով տարածվեց չափորոշիչների վրա հենված ուսուցման բարձր արդյունքներ ապահովելու մոտեցումը: Այժմ արձանագրվում է կրթական քաղաքականության վերաուղղողում՝ ուսուցման արդյունքների սահմանման և դրանց անընդհատ չափման մոտեցումից դեպի կրթական գործընթացի խթանման և գործընթացի վրա ներդրումներ անելու քաղաքականությունը: Այս տեսանկյունից ուսուցման համագործակցային մեթոդը լայն հնարավորություններ է տալիս շեշտադրումը տեղափոխելու սովորելու գործընթացի վրա: Ներկայումս ուսուցման համագործակցային մեթոդները լայնորեն ներդրվում են Եվրոպական զարգացած՝ հատկապես սկանդինավյան երկրներում և Միացյալ Նահանգներում:

Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, թեմա հետազոտելու կամ միտք, նորարարություն իրականացնելու համար:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

1. դասարանում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
2. բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
3. ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի կազմակերպման առավել բարձր աստիճան է, որը ենթադրում է որոշակի նոր մշակույթի ձևավորում: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են կարող ապահովել համագործակցային ուսուցում: Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանց մղել ենք արդյունավետ համագործակցության ճատ են պատահում դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի թափած ջանքերն արդյունքներ չեն ունենում:

Համագործակցային ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել որոշակի տարրեր, որոնց անվանում են համագործակցային ուսուցման տարրեր: Լավ և վատ կառուցված դասերը տարբերվում են հենց այդ տարրերի առկայությամբ կամ բացակայությամբ: Ավելին, հենց այդ տարրերն են, որ պետք է ապահովեն համագործակցային ուսուցումը դասի բոլոր փուլերում: Համագործակցային ուսուցման տարրերն ըստ Ջոնսոնների հիմնականում հինգն են.

1. *դրական փոխկախվածություն,*
2. *դեմ առ դեմ փոխազդեցություն,*
3. *անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,*
4. *միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի (համագործակցային և սոցիալական) հմտություններ,*
5. *խմբային գործընթաց/մշակում:*

Հետագայում այդ տարրերին ավելացվեց ևս մեկը: Պասի Սալբերգը, փոխներգործուն / ինտերակտիվ առաջադրանքը դիտարկում է, որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Այս տարրը ապահովում է համապատասխան պայմաններ, մյուս տարրերի կիրառման ու զարգացման համար [8]: Ուսուցման ընթացքում համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար, ինչպես նաև ապահովում է ռեֆլեքսիան և բարելավում է խմբային աշխատանքը:

Համագործակցային ուսուցման ապահովման կարևոր պայմաններից մեկը խմբի անդամների միջև դրական՝ աջակցող փոխկախվածության ապահովումն է: Սովորաբար ուսուցման ընթացքում խմբի անդամների միջև փոխկախվածություն կարող է առաջանալ երեք տարբեր ձևերով.

6. **Մրցակցային.** երբ խմբի անդամները ուսուցման նպատակներին հասնելու համար մրցում են միմյանց հետ: Նման մրցակցային իրավիճակում, երբ կան հաղթողներ՝ լինում են նաև պարտվողներ: Արդյունքում մրցակցությունը կարող է խափանել խմբի կայացման ընթացքը՝ խոչնդոտելով նպատակներին հասնելու համար համատեղ ջանքերի գործադրմանը:
7. **Անհատական.** սոցիալական փոխկախվածությունը կարող է վերանայ, որի արդյունքում խմբի անդամները առկախվում են իրենց խմբակիցների հաջողություններից կամ ձախողումներից: Խմբային աշխատանքի ժամանակ նման բան տեղի է ունենում այն դեպքում, երբ յուրաքանչյուր աշակերտ կատարում է իր անհատական առաջադրանքը, որը կապ չունի մնացածների առաջադրանքների հետ:
8. **Համագործակցային.** խմբի անդամները համագործակցում են միմյանց հետ ընդհանուր նպատակին հասնելու համար և գիտակցում, որ իրենք կարող են դրան հասնել միայն այն դեպքում, երբ խմբի բոլոր անդամները հասնեն իրենց նպատակներին:

Դրական փոխկախվածությունը համագործակցային ուսուցման առաջին կարևոր առանձնահատկությունն է: Դրական փոխկախվածությունն այն զգացումն է, որ խմբի յուրաքանչյուր անդամ կապված է խմբի մյուս անդամների հետ այնպես, որ չի կարող հասնել հաջողության, քանի դեռ նրանք չեն հասել հաջողության և հակառակը. խմբի բոլոր անդամները գիտակցում և զգում են, որ իրենք «սուզվելու են կամ լողալու են միասին»: Որքան ավելի ուժեղ է դրական փոխկախվածությունը, այնքան ավելի արդյունավետ կլինի համագործակցային ուսուցումը: Շատ դեպքերում դասարանում ակնհայտ է դրական փոխկախվածության առկայությունը, երբ աշակերտներն աշխատում են փոքր խմբերով՝ փոխանակելով մտքեր և ռեսուրսներ՝ միմյանց տրամադրելով օգնություն և հանդես բերելով համատեղ նպատակներին հասնելու նվիրվածություն: Խմբերում դրական փոխկախվածություն ստեղծելու համար ուսուցիչը պետք է տա խմբային ընդհանուր նպատակ հետապնդող

առաջադրանքներ: Պետք է նշել, որ այս տարրի ապահովման շնորհիվ խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու և աջակցելու մթնոլորտ: Սովորողների ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն, նրանց մոտ ձևավորվում է այն մոտեցումը, որ միասին կարելի է հասնել ավելի մեծ նվաճումների քան առանձին-առանձին: Դրական փոխկախվածությունը նպաստում է նաև խմբում հանդուրժողականության և վստահության մթնոլորտի ձևավորմանը: Նպատակին հասնելու համատեղ քննարկումներն ու ձգտումները օգնում են ապահովելու բարենպաստ փոխհարաբերություններ խմբի անդամների միջև [2]:

Երբ խմբերում արդեն ստեղծված է դրական փոխկախվածություն, անհրաժեշտ է առավելագույնի հասցնել աշակերտների կողմից միմյանց սատարելու գործոնը՝ օգնելով, աջակցելով, նպաստելով, խրախուսելով և գովաբանելով միմյանց սովորելու ջանքերը: Համագործակցային խմբերով աշխատելու ընթացքում, ի տարբերություն ավանդական ուսուցման, սովորողները հաղորդակցվում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Դրական փոխկախվածությունը հանգեցնում է դրական/խթանող փոխազդեցության, ինչը համագործակցային ուսուցման երկրորդ կարևորագույն տարրն է: Այս դեպքում խմբի անդամներն աշխատում են դեմ-դիմաց նստած և ոչ թե շարքերով, որը կապահովի խմբի անդամների արդյունավետ հաղորդակցումը և նրանց առավելագույն մասնակցությունը խմբային քննարկումներին: Կարելի է ասել, որ այս տարրը հիմնականում ունի տեխնիկական բնույթ և այն ապահովելու համար խմբի անդամները պետք է նստեն դեմ-

դիմաց և հաղորդակցվելիս տեսնեն միմյանց: Հաճախ այն անվանում են «համագործակցային» կամ «միասին սովորելու» դիրք:

Խթանող փոխազդեցության արդյունքում սովորողներն ավելի արդյունավետ են համագործակցում, փոխանակում են անհրաժեշտ ինֆորմացիա և ռեսուրսներ, ավելի արդյունավետ են մշակում, վերլուծում ինֆորմացիան, ապահովում են հետադարձ կապ՝ խմբի հետագա աշխատանքի բարելավման նպատակով, քաջակերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

Համագործակցային ուսուցման նախապայմաններից մեկն այն է, որ սովորողը հաշվետու է և անձնական պատասխանատվություն է կրում իր ուսուցման ընթացքի և արդյունքների համար կամ խմբի յուրաքանչյուր անդամ գիտակցում է, որ իր ջանքերն անհրաժեշտ են խմբին՝ հաջողության և ընդհանուր նպատակներին հասնելու համար: Համագործակցային խմբերում անհատական հաշվետվությունը նշանակում է, որ խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատվություն է կրում խմբի ուսուցման արդյունքների համար և վստահաբար գիտի, որ իր ներդրումը կարևոր է խմբի հաջողությունն ապահովելու համար: Անհատական հաշվետվությունն ու պատասխանատվությունն առկա են, երբ առանձին գնահատվում է յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությունը և դրա մասին տեղեկացված են խմբի բոլոր անդամները: Այստեղ կարևոր է, որ խմբի անդամներն իրազեկ լինեն, թե խմբի անդամներից ով ինչպիսի օգնության և օժանդակության, խրախուսման կարիք ունի՝ առաջադրանքը կատարելու համար: Նմանապես էական է, որ խմբի անդամները գիտակցեն, որ չեն կարող «գլուխ պահել» մնացածների հաշվին: Համագործակցային ուսուցման հիմնական նպատակը խմբի յուրաքանչյուր անդամին ավելի ուժեղ և ինքնուրույն դարձնելն է: Աշակերտները սովորում են միասին, որպեսզի հետագայում հանդես գան որպես ուժեղ անհատներ:

Համագործակցային ուսուցման ընթացքում սովորողի հաշվետու լինելն ու անձնական պատասխանատվությունը բարձրացնելու ամենահզոր միջոցներից է յուրաքանչյուր աշակերտի անհատական ներդրման գնահատումը, որի դեպքում արդյունքների մասին տեղեկացվում է համապատասխան խմբին և սովորողին:

Աշակերտի ներդրման գնահատումը կարող է հիմնված լինել ուսուցչի կողմից իրականացվող դիտարկումների կամ կարճ գրավոր կամ բանավոր թեստերի արդյունքների վրա: Արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ է, որ խումբը տեղյակ լինի խմբի և յուրաքանչյուր անհատ անդամի ուժեղ և թույլ կողմերի մասին, որը կօգնի ճշտել այն ոլորտները, որտեղ զգացվում է օգնության և խրախուսման կարիք: Ավելին, անհրաժեշտ է, որ աշակերտները հասկանան և որոշակիորեն զգան, որ իրենք չեն կարող խուսափել պատասխանատվությունից՝ սեփական առաջադրանքը փոխանցելով խմբի որևէ այլ անդամի:

Խմբային առաջադրանքներ կատարելիս աշակերտներն անցնում են այնպիսի իրավիճակներով, որոնք պահանջում են բարդ փոխհարաբերություններ և սոցիալական հմտություններ: Հաճախ այդ հմտություններին չտիրապետելու պատճառով խմբային աշխատանքը ձախողվում է: Համագործակցային ուսուցման

հաջողության համար պահանջվում է փոքր խմբերում աշխատելու սոցիալական/համագործակցային հմտությունների զարգացում: Այդ հմտությունները ներառում են վարքագծային այնպիսի որակներ, ինչպիսիք են միջանձնային փոխհարաբերություններում վստահության ստեղծումը, դեկավարման հմտությունները, հաղորդակցումը և միմյանց աջակցելը, որոշումներ կայացնելու և կոնֆլիկտներ լուծելու հմտությունները: Միմյանց լսելու, առաջացած թուրքըմբռնումներն ու կոնֆլիկտները լուծելու, միմյանց խրախուսելու, համատեղ աշխատանքը պլանավորելու և իրականացնելու վարժությունների օգտագործումը նպաստում է սովորողների մոտ համապատասխան հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Եթե սովորողներն առաջին անգամ են աշխատում խմբերով, ապա ուսուցչի համար գերխնդիր է դառնում նրանց սովորեցնել համագործակցելու հմտություններ [5, էջ 116]:

Խմբային գործընթացը խմբի անդամների կողմից հաջողությունների և արդյունավետ փոխհարաբերությունների, խմբային համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլն է: Խմբերը նկարագրում են խմբի անդամների օգտակար և ոչ օգտակար գործողությունները և որոշումներ կայացնում, թե ո՞ր վարքագիծը կամ գործողությունները պետք բարելավել կամ զարգացնել: Ուսուցիչը խմբերին այդ նպատակով պետք է տրամադրի անհրաժեշտ ժամանակ և ընթացակարգեր: Նման քննարկումները հնարավորություն են ընձեռում ամրապնդելու խումբը՝ պահպանելով արդյունավետ փոխհարաբերությունները խմբի ներսում: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը, մղում են նրանց սոցիալական հմտությունների շարունակական կիրառման:

Համագործակցային ուսուցման վերը նկարագրված հինգ տարրերը գործնականում կիրառվում են առաջադրանքի կատարման ժամանակ, որի ընթացքում սովորողները կարիք ունեն համագործակցելու: Արդյունավետ համագործակցային աշխատանքը հնարավոր է միայն այն դեպքում, երբ առաջադրանքը, որի վրա աշխատում է խումբը, տրված է այնպես, որ այն կատարելու համար պահանջվում է թիմային աշխատանք: Ահա այս տիպի առաջադրանքները Պասի Սալբերգը անվանում է փոխներգործուն կառուցվածք ունեցող առաջադրանք և այն դիտարկում որպես համագործակցային ուսուցման վեցերորդ տարր: Շատ հաճախ խմբի

վատ աշխատանքի պատճառներից մեկը առաջադրանքի սխալ ընտրությունը կամ կազմակերպումն է: Ակնհայտ է, որ ոչ բոլոր առաջադրանքներն են հարմար համագործակցային ուսուցման նպատակների համար, քանի որ դրանք չեն նպաստում ներխմբային փոխազդեցությանը [7, էջ 176]:

Համագործակցային ուսուցումն ապահովելու համար ընտրված առաջադրանքը պետք է ստեղծի դրական փոխկախվածություն աշակերտների (գույգերի կամ խմբերի) միջև, խմբի յուրաքանչյուր անդամի մոտ ձևավորի անհատական հաշվետվության ու պատասխանատվության զգացում, կազմակերպվի դեմ առ դեմ փոխազդեցության սկզբունքով, նպաստի սոցիալական հմտությունների դրսևորմանը, ավարտվի խմբային գործընթացով/մշակմամբ: Համագործակցային ուսուցման առաջադրանք պատրաստելիս, ուսուցիչը պետք է հետևի երեք հիմնական պայմանների. ա) խմբի բոլոր անդամները պետք է ունենան մասնակցելու դրդապատճառ, բ) առաջադրանքը պետք է խմբի բոլոր անդամներին արտահայտվելու հնարավորություն ընձեռի, գ) խմբի անդամները պետք է առաջադրանքը կատարելիս ընտրություն կատարեն և որոշում ընդունեն:

### 3. Գործնական համատեքստ

Ստորև ներկայացված է համագործակցային մեթոդով դասավանդման քայլերի հաջորդականությունը, որը ես մտադրություն ունեմ կիրառել հետազոտության ընթացքում:

#### Նախապատրաստական փուլ

ա) Միջանձնային փոխհարաբերությունների թեստավորում, արդյունքների վերլուծություն, անհրաժեշտ աջակցություն: Թեստավորումը անցկացվում է պարզելու համար, թե որքանով է հարմար հետազոտվող դասարանում կազմակերպել համագործակցային մեթոդներով դասավանդման պրոցես:

բ) Բազային մաթեմատիկական գիտելիքների և կարողությունների ստուգում մաթեմատիկական առարկայական հայտորոշիչ թեստի միջոցով: Գիտելիքների պակասի դեպքում ուղղորդել նրանց մաթեմատիկայի համապատասխան բաժնի կրկնության, որը կքարելավի նրանց մաթեմատիկական գիտելիքները և հիմք կհանդիսանա հետագայում ֆիզիկայի կուրսի ավելի արդյունավետ յուրացման համար և մաթեմատիկական գիտելիքների պակասը էական ազդեցություն չի ունենա հետազոտության արդյունքների վրա: Հայտորոշիչ թեստի մեջ ընդգրկված են այն մաթեմատիկական կարողությունները, որոնք անհրաժեշտ են տվյալ թեմատիկ միավորի նյութը հաջողությամբ յուրացնելու համար:

գ) Դասապրոցեսի նախնական պլանավորում, այն է՝ ուսումնասիրել արդեն իսկ հայտնի համագործակցային մեթոդները, փորձել հասկանալ մեթոդների կիրառման առանձնահատկությունները և կատարել գնահատում:

Պետք է նկատի ունենալ, որ ուսուցման մեթոդի, հնարի ընտրությունը կախված է՝

- Դասի տիպից և կառուցվածքից
- Ուսումնական նյութի բովանդակությունից:
- Աշակերտների տարիքից:
- Դասարանում սովորողների թվաքանակից:
- Պատրաստվածության մակարդակից:
- Շահագրգռվածությունից ու հետաքրքրությունից և այլն:

**Առաջադրանքը՝** մեթոդը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությունը ուսուցման պրոցեսին: Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանց մղել ենք արդյունավետ համագործակցության:

Ահա թե ինչու՞ անհրաժեշտ է նախօրոք պլանավորել խմբային աշխատանքի գնահատումը, որի մեջ պետք է ներգրավել նաև աշակերտներին: Այդ դեպքում նախ՝

1. Նրանք կսովորեն գնահատել:
2. Կիմանան, թե ի՞նչ է պահանջվում իրենցից:
3. Կմեծանա պատասխանատվությունը:

Խմբային գնահատման ձևերից են՝

1. Կարող է գնահատվել խմբային աշխատանքի արդյունքը և այդ միավորը տրվի խմբի յուրաքանչյուր անդամի:
  2. Եթե աշխատանքի արդյունքը կամ ներկայացումը խմբի նպատակների մի մասն է կազմում, ապա անդամները կարող են գնահատել մեկը մյուսին: (օր՝ «խճանկար» մեթոդի ժամանակ):
  3. Խմբի անդամները կարող են գնահատել իրենց սեփական ներդրումները խմբում: Վերջինս իրականացվում է հարցաթերթիկի միջոցով:
- դ) Ձույգերով կամ փոքր խմբերով համագործակցային աշխատանքի համար առաջադրանքների մշակում:
- ե) Դասասենյակի կահավորում, սեղանների և աթոռների հարմար դասավորվածություն, մարկերներ, A4 չափսի թղթեր, առաջադրանքների թերթիկներ, դասագրքեր:

#### 4. Հետազոտության ընթացքը

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի կողմից:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Իմ հետազոտությունը կատարել են համագործակցային ուսուցման «խճանկար» և «Աշակերտների թիմային առաջադիմություն» մեթոդների կիրառմամբ՝ մի դասարանում և ավանդական (դասախոսական) նյութի հաղորդմամբ՝ զուգահեռ դասարանում:

Թիրախային խումբ՝ 12-րդ «բ» բնագիտամաթեմատիկական հոսքի ֆիզմաթ ենթախումբ, որում սովորում են 8 աշակերտներ: Խմբում սովորում են 4 աղջիկ և 4 տղա:

Թեման՝ Էլեկտրամագնիսական ալիքների սանդղակը ըստ ալիքի երկարության

Մեթոդը՝ Խճանկար

Նպատակը՝ Նոր դասի հաղորդումը

Նախապես միջանձնային փոխհարաբերությունների թեստավորման և բազային մաթեմատիկական գիտելիքների ու կարողությունների ստուգման գործընթացից հետո, ինչպես նաև դասի նախապատրաստական փուլի ավարտից հետո աշակերտներին ծանոթացնում են խճանկար մեթոդի բովանդակությանը.

Խճանկար (Ջիգսո, Jigsaw) համագործակցային ուսուցման մեթոդը մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի կողմից և այլն : Որից հետո բացատրում են աշխատանքի անցկացման կարգը, իսկ վերջում՝ գնահատման կարգը.

Նախ՝

1. խմբի անդամները կարող են գնահատել մեկը մյուսին ուսուցիչը առավելագույնը կգնահատի խմբի այն մասնակցին ով լավ է սովորեցրել իր ընկերներին Համաձայն մեթոդի անցկացման կարգի աշակերտներին բաժանում են չորս անդամ ունեցող տարասեռ խմբերի: Այնուհետև խմբերի ներսում սովորողներին բաժանում են աշխատանքային թերթիկներ և համարակալում (1;2;3;4;): 1Փուլ – Խմբի անդամների մեջ բաժանում են ուսումնասիրման ենթակա նյութը, որից հետո հրահանգում են երկու խմբերը վերադասավորվեն ավելի փոքր՝ (1;1) (2;2) (3;3) և (4;4) փորձագիտական խմբերի, որպեսզի միասին սովորեն և քննարկեն հանձնարարված նյութը կատարելով անհրաժեշտ նշումներ: Տրվում է աշխատանքի կատարման ժամանակ:
2. Փուլ-Խմբերը կրկին վերադասավորվում են սկզբնական ձևով և յուրաքանչյուր անդամ սովորեցնում է իր սովորած նյութը խմբի անդամներին: Տրվում է աշխատանքի կատարման ժամանակ:





3. Դասի վերջում բանավոր հարցերով պարզում են սովորողների կողմից նոր նյութի յուրացման մակարդակը և կատարում գնահատում:

Մյուս թիրախային խումբը՝ -11րդ «ա» դասարան ֆիզմաթ ենթախումբ, որում սովորում են 12 աշակերտ: Խմբում սովորում են՝ 2 աղջիկ և 10 տղա:

Թեման՝ Գազային օրենքները

Մեթոդը՝ Աշակերտների թիմային առաջադիմություն

Նպատակը՝ Գազային օրենքների ամրապնդման դաս

Նախապես միջանձնային փոխհարաբերությունների թեստավորման և բազային մաթեմատիկական գիտելիքների ու կարողությունների ստուգման գործընթացից հետո և տվյալ դասի համար անհրաժեշտ նախապատրաստական փուլի ավարտից հետո աշակերտներին ծանոթացնում են կիրառվող մեթոդի բովանդակությանը, որից հետո հրահանգում են խումբ կազմել: Տվյալ պարագայում դասարանում ձևավորվում է երեք աշխատանքային խումբ կազմված չորս աշակերտներից: Խմբերին հանձնարարում են ուսումնասիրման ենթակա թեմաները՝



Բոյլ-Մարիոտի օրենքը Էջ(26)

Գեյ-Լյուսակի օրենքը Էջ(28)

Շառլի օրենքը Էջ(30)

Խմբերին բաժանում են նախապես կազմած վերլուծության հարցաթերթիկներն ու աշխատանքային թերթիկները:

Տրվում է ժամանակ նյութի քննարկման, մտքերի փոխանակման և սովորողների կողմից նախընտրած ներկայացման ձևի՝ (բացատրություն, գծապատկեր և այլն) համար:

Աշխատանքը ներկայացնում է պատահականորեն իմ կողմից ընտրված աշակերտը (սա պարտավորեցնում է իմբի բոլոր աշակերտներին պատրաստ լինել):

Դասի վերջում խմբի անդամները գնահատում են իրենց սեփական ներդրումները խմբում լրացնելով ստորև բերված հարցաթերթիկը՝

### **Ինչպիսի՞նն են ես խմբում**

- Մի որոշ ժամանակ լուռ եմ մնում, հետո միանում խմբի քննարկումներին:
- Ինձ լավ չեմ զգում և կուզենայի, որ միայնակ աշխատեի:
- Ուզում եմ ինձ վրա վերցնել առաջնորդի դերը:
- Մյուսներին ընդհատում եմ, որպեսզի պնդեմ իմ կարծիքը:
- Նյարդայնանում եմ, երբ մյուսները շեղվում կամ երկար խոսում են, որոշումներ կայացնելու կամ գործելու փոխարեն:
- Փորձում եմ հաշտեցնել խմբի այն անդամներին, որոնք անհամաձայնություն ունեն միմյանց հետ:

Լրացման ձևը յուրաքանչյուր աշակերտ նշում է կետ, որոնք ըստ իրեն բնութագրում են իր աշխատանքը խմբում: Ուսուցիչը հավաքում է խմբի անդամների հարցաթերթիկները, խառնում և վերադարձնում նույն խմբին: Խումբը առանձնացնում է շատ անգամ նշված և բացակայած պարտականությունները, որն էլ կբնութագրի խմբի ընդհանուր պատկերը:

Հետազոտության արդյունքները կփաստեն, թե որքանո՞վ է արդյունավետ համագործակցային ուսուցումը դասավանդման պրոցեսում և ինչպե՞ս են դրանք նպաստում աշակերտների ուսման առաջադիմության աճին և թե դասավանդման պրոցեսի ո՞ր հատվածում կամ ո՞ր տիպի դասի ընթացքում է նպատակահարմար դրանք օգտագործել:

## **5. Տվյալների մշակում և վերլուծություն**

Հետազոտությունը կատարել են երկու զուգահեռ՝ 11-րդ «ա» և 11-րդ «բ» դասարանների 12-րդ «ա» և 12-րդ «բ» միջև:

Մի դասարանում դասապրոցեսն իրականացրել են համագործակցային ուսուցման միջոցով, մյուս դասարանում նյութի հաղորդման ավանդական, դասախոսական եղանակով: Իհարկե, անհրաժեշտ

Է ճիշտ ընտրել այն թեման, որի շրջանակներում հնարավոր է օգտագործել համագործակցային ուսուցմամբ առաջարկվող որևէ մեթոդ, քանի որ ֆիզիկայի ոչ բոլոր դասերն են, որ կարելի է անցկացնել խմբային աշխատանքի մեթոդով:

Այսպիսով՝ թիրախային խմբի 11-րդ «ա» դասարանում, որտեղ սովորում են 12 աշակերտ «Գազային օրենքները»-ի ամփոփումը «աշակերտների թիմային առաջադիմություն» մեթոդով ամփոփելիս ունենք հետևյալ արդյունքները՝

- «9» միավոր – 1 աշակերտ
- «8» միավոր – 2 աշակերտ
- «7» միավոր – 5 աշակերտ
- «6» միավոր – 2 աշակերտ
- «5» միավոր – 1 աշակերտ
- «4» միավոր – 1 աշակերտ

Ստացվում է, որ այս դասարանում որակական առաջադիմությունը կազմում է՝ 67% :

11-ի «բ» դասարանում, որտեղ սովորում են 11 աշակերտ վերոնշյալ թեմաները ուսուցանվել են ավանդական( դասախոսական) մեթոդով, ամփոփելիս ունենք հետևյալ արդյունքները՝

- «7» միավոր – 6 աշակերտ
- «6» միավոր – 3 աշակերտ
- «5» միավոր – 1 աշակերտ
- «4» միավոր – 1 աշակերտ

Ստացվում է, որ այս դասարանում որակական առաջադիմությունը կազմում է՝ 55%:

12-ի «ա» և 12-ի «բ» դասարանների միջև կատարված հետազոտությունը նույնպես հավաստեց համագործակցային ուսուցման մեթոդի գերակայությունը ավանդական մեթոդի նկատմամբ: Իրոք, թիրախային 12-ի «բ» դասարանում, որտեղ սովորում են 8 աշակերտ «Էլեկտրամագնիսական ալիքների սանդղակը» դասի անցկացումը «խճանկար» մեթոդով անսպասելի լավ արդյունք տվեց:

Նախ, որ բոլորն անխտիր աշխատում էին( ի դեպ այս դասարանում երկու աշակերտ կա, որոնք չնայած ընդունակ են, բայց և շատ ծույլ են):

Երկրորդ, աշակերտների մոտ մոտիվացիան կտրուկ բարձրացավ, այն քանից հետո, երբ հասկացան գնահատման կարգը՝ իմ առաջադրած պայմանով բարձր գնահատական կստանա խմբի այն անդամը, որի բացատրած նյութը լավ կպատասխանեն իր խմբի մյուս անդամները: Այսպիսով՝ ունեցանք հետևյալ արդյունքները՝

- «9» միավոր- 3 աշակերտ
- «8» միավոր- 2 աշակերտ
- «7» միավոր –1 աշակերտ
- «6» միավոր –2 աշակերտ

Ստացվում է, որ համագործակցային ուսուցմամբ որակական առաջադիմությունը կազմում է՝ 75%: Իսկ 12-րդ «ա» դասարանում, որտեղ սովորում է 11 աշակերտ նույն դասի հաղորդումը ավանդական մեթոդով տվեց հետևյալ արդյունքը՝

- «9» միավոր -1 աշակերտ
- «8» միավոր -1 աշակերտ
- «7,, միավոր -3 աշակերտ
- «6» միավոր -4 աշակերտ
- «5» միավոր -2 աշակերտ

Այսինքն, արդյունքը սպասվածից էլ ցածր է ստացվել, մոտ 45%, չնայած այն հանգամանքին, ուսումնասիրվող նյութը շատ մատչելի է և պարզապես ուշադիր լսելու դեպքում աշակերտը կարող է պատասխանել հարցերին: Այս փոքրիկ փորձը ցույց տվեց, որ աշակերտի դասին ներգրավված լինելը կախված չէ, թե ուսումնասիրվող նյութը որքանով է դժվար կամ մատչելի, այլ կարևորն այն է, որ աշակերտը անգործության չմատնվի ինչպես դա հաճախ հանդիպում է ուսուցչակենտրոն ավանդական դասի դեպքում:

## Համագործակցային ուսուցման արդյունքում՝

- Աշակերտների միջև ձևավորվեցին միմյանց հետ հաղորդակցվելու, դասընկերոջ հետ աշխատելու հմտություններ:
- Մեծացավ աշակերտների հետաքրքրությունը և ներգրավվածության աստիճանը դասապրոցեսի ընթացքում:
- Համագործակցային ուսուցման արդյունքում գրանցվեց առաջադիմության աճ:

Համագործակցային ուսուցման դժվարությունները.

Համագործակցային ուսուցումն ունի ինչպես իր առավելությունները, այնպես էլ իր թերությունները կամ այսպես ասած դժվարությունները:

Նախ՝ խմբային աշխատանքի համար նախապատրաստական փուլում անհրաժեշտ է վերադասավորել աշակերտական սեղանների դասավորվածությունը, որը թե աշխատատար է և թե ժամանակատար, հատկապես, որ դասն ավարտելուց հետո կրկին նստարանները անհրաժեշտ է բերել նախկին դասավորվածությանը: Սա խնդիր է, որի լուծումը տեսնում եմ առանձին խմբային աշխատանքների համար նախատեսված հատուկ դասասենյակի կահավորման մեջ:

Երկրորդ՝ Էական թերությունն այն հանգամանքն է, որ մեկ դասաժամով չես հասցնում լսել բոլոր աշակերտների պատասխանները (իսկ դա կարևոր է, քանի որ բոլորն էլ աշխատել են): Ստացվում է այնպես, որ ևս մեկ դասաժամ է տրամադրվում խմբային աշխատանքն ավարտին հասցնելու համար, ի տարբերություն ավանդական դասախոսական մեթոդի, որը այս առումով լիարժեք լուծում է իր առջև դրված խնդիրը, նույնիսկ ծավալուն և բարդ դասերի դեպքում:

## 6. Ամփոփում

Ոչ մի հետաքրքիր նորույթ  
ի հայտ չի գալիս առանց  
համագործակցության:

*Ջեյմս Ուայթսոն*

Իմ հետազոտական աշխատանքի ընթացքում պարզ դարձավ, որ արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը՝ դա ուսուցման տարբեր միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների և այն իրականացնելու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցումը լայն տարածում է ստանում քանի, որ խմբային համատեղ աշխատանքը հեշտացնում է նյութի ընկալումը, միաժամանակ ապահովում աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցություն: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտների միջոցով, միայն անհրաժեշտ է, որ ուսուցիչը ճիշտ ընտրի տվյալ դասի անցկացման համար կիրառվող մեթոդն ու ճիշտ ուղղորդի աշակերտներին իրենց աշխատանքում: Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը, պատասխանատվությունը և որ ամենակարևորն է դասապրոցեսին ներգրավված են դառնում հատկապես թույլ ընդունակություն և սովորելու նկատմամբ անտարբեր երեխաները:

Իրականում խմբային աշխատանքը բոլորովին էլ հեշտ չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Կարող են տարիներ պահանջվել համագործակցային ուսուցման հմտություններին տիրապետելու համար և փորձել դասավանդել այնպես, ինչպես սկսել են անել ուրիշները:

Ահա, թե ինչու ես որոշեցի շարունակական դարձնել մեթոդների ու հնարքների օգտագործումն իմ հետագա աշխատանքում:

## 7. Գրականություն

1. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան «Համագործակցային ուսուցում»:
2. Ա.Գյուլբուրդյան, Ս.Խաչատրյան «Մասնագիտական զարգացման ձեռնարկ
3. ուսուցիչների համար»:
4. «Բնագետ» ամսագիր:
5. Кашлев С.С. Интерактивные методы обучения / С.С. Кашлев.- М.: Мозаика-Синтез,
6. 2015.- 114 с.
7. Зарукина Е.В. Активные методы обучения: рекомендации по разработке и
8. применению / Е.В. Зарукина, Н.А. Логинова.- СПб: СПбГИЭУ, 2010.- 116 с.
9. Интерактивные технологии в образовательном процессе / сост. Е.Б. Манузина, Е.Э.
10. Норина, А.Ю. Арутюнян.- Бийск: АГАО им. В.М. Шукшина.- 2014.- 89 с.
11. 7. Панина Т.С., Вавилова Л.Н. Современные способы активизации обучения. Учеб.
12. пособ. / М.В. Кларина – М.: Издат. центр «Академия», 4-е изд., стер. - М.: 2008. - 176 с.
13. Pasi Salberg. “Principles of Co-operative Learning”, University of Helsinki.